

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Քաղմավէա», փետրուարի 40-ը  
գաղթեց խմբագրական յօդուածի  
մէջ մի քանի ցաւալի և լուսահա-  
տական էջեր են բացուած այն հին,  
ճակատագրական զժրախտութիւ-  
նից, որ հայի գաղթականութիւնն  
է ներկայացնուած Դա մի թռուցիկ  
տեսութիւն է, բայց շատ ցանկալի  
և խրատական կը լինէր հայ գաղ-  
թականների մի ամբողջացրած  
պատմութիւնը: Մինչև այժմ հրա-  
տարակուած են մի քանի գրուածք-  
ներ, որոնք վերաբերում են այս  
կամ այն գաղթականութեան ան-  
ցեալին և ներկային. բայց հաւա-  
քել այդ բոլորը, ամբողջացնել,  
մանաւանդ լուսարաններ թէ ինչ  
ընդհանուր պատմական օրէնքնե-  
րից էր կազմուած հայ գաղթական-  
նութիւնների ճակատագրը—ահա  
ինչն է պակասում: Մեր պատմու-  
թեան մեծ մասը, ալսպիսով, դեռ  
չէ լուս հանուած և մենք չը դի-  
տենք թէ ինչ էր գաղթականու-  
թիւնը հայ ազգի համար: Յօդուա-  
ծագրիը կամենում է գուշակել թէ  
որպիսի երկիրներում հայերը կա-  
կարող են գաղթականութիւններ  
հիմնել, երկիւղ չը կրելով թէ շուտ  
կը ձուլուն տեղացների հետո  
Այս հարցը ևս լուծում է շատ ան-  
բարարար կերպով, որովհետև մի  
այդպիսի հարց չէ էլ կարելի լու-  
ծել Յօդուածից մենք իմանում  
ենք որ Եղիպտոսի և Ամերիկայի  
հայ գաղթականութիւնները հա-  
լուկը վրայ են. արդէն ամերի-  
կացի և եղիպտոսի հայեր կան, ո-

րոնց համար հայերէնը խորթ լե-  
զու է: Եւ եթէ այդ ազատ երկիր-  
ներումն էլ հայը չէ կարողանում  
պահպանել իր լեզուն, առանց որի  
չէ կարող լինել ազգութիւն,—հաս-  
կանալի է, ուրեմն թէ ինչ կը  
լինի նա այնպիսի տեղերում, ուր  
ամեն տեսակ արհեստական միջոց-  
ներ են առեղծում, ազգութիւննե-  
րը ոչնչացնելու համար:—«Հայ բը-  
ժկարանի» յօդուածը կարող էր հե-  
տաքրքրական լինել մեր կուտու-  
րայի պատմութեան համար, եթէ  
մեր հին բժշկարաններ քննողները  
լինէին մասնագէտներ և պարզէին  
թէ ինչ հանգամանքներ է ունեցել  
մեղանում զիտական բժշկականու-  
թիւնը, որ չափով է ենթարկուած ե-  
ղել արաբական և այլ ազգերի զիտու-  
թեան: Բայց ալստեղ այդ բժշկա-  
րանները քննուում են լոկ բանա-  
սիրական տեսակէտից, ալսինքն իր-  
րկ ձեռագիր, իբրև հնութիւնից մա-  
ցած գրաւոր աշխատութիւն, առանց  
քննադատուելու և վերլուծելու գրքի  
բովանդակութիւնը, զիտական ար-  
ժանիքը: Նույն այդ տեսակէտից էլ  
նայել է Հ. Դ. Վ. Յովինանեանը իր  
«Հետազոտութիւնք նախնեաց սամ-  
կորէնին վրայ աշխատութեան մէջ»  
Բժշկական գրուածքները անցեալ  
տարիների մեր գրականութեան  
պատմութեան մէջ շատ նշանաւոր  
դեր ունեն, քանի որ դրանք էին  
համարեա միակ գրուածքները, ո-  
րանք նշանակուած էին ժողովրդի  
ընդհանրութեան համար: Շատ ցան-  
կալի էր, որ մեր բժիշկները կամ

առհասարակ ձեռնհաս անձինք ըսկաէին ուսումնասիրել մեր հին բրժկական գրականութիւնը և որոշին նրա գիտական արժանաւորութիւնը.—ծամանակակից հարցերի վրայ ուշադրութիւն դարձնելով, ժամանակվազը զետեղել է այս գըրքում նախագահ Կրիստոֆի մասին մի համաօտ յօդուած, ուր բնորոշուած է հերոս բոէների ծերանի նահապետը.—Կայ և մի թեթև կենագրութիւն, որի մէջ զարս է բերուած մեր հայ գրականութեան նահապետներից մէկը—Կարապետ Խթիմեան, որ բազմաթիւ (45-ից ամել հատոր) թարգմանութիւններ է տուել, բայց աւելի յայտնի է նըրանով, որ 1852 թուականից մինչև 1884 թ. խմբագրում և հրատարակում էր Կ. Պոլտի ամենանշանաւոր հայ լրագիրներից մէկը—«Ծախսըց» հենագրութիւնը համաօտ է, ընդհանուր բառերով գրուած, աւելի հետաքրքրական կը լինէր, եթէ Խթիմեանի կեանքի հետ պատմուած լինէր և «Ծախսից» կեանքը, որ այնքան երկարատև է եղել և արդինաւոր (նա այժմ էլ հրատարակում է իբրև շաբաթաթերթ, բայց որդիշների խմբագրութեամբ): Խթիմիանն այժմ 74 տարեկան է:

—

**ՅԹԱՏՐՈՒՆԻ**, գրական և թատերական հանդէս. № 1, 1900 թ. գեղաւեմբեր: Հանդէսի 1/3 աւելին (62 էր.) բանում է Մուրացանի մետաղան կամ Հայրենաւէր Օրիորդապատմական դրաման, որի մասին առանձին կը խօսենք. Մ. Բերբերեանի սՄի էջ Վերածնութեան շըրջանից կօմպիլացիան կարգացում է ոչ առանց հետաքրքրութեան. ալդուդ խօսում է Խօկկաչի և Կ նրա Շնեկամերօնա աշխատութեան մասին և այդ ալդուդ մեր մասին մէջ ակնարկ է զբում վերածնութեան դարի վրայ: Թեման շատ հետաքըր-

քրական է, նիւթի առարկան շատ խրատական և ոգերիչ: Դանտէի, Պէտրարկալի. Բօկկաչի և ուրիշ հումանիստների ժամանակները ալժըմ շատ լաւ ուսումնասիրուած են, կարելի էր, օգտուելով այդ գիտնական աշխատութիւններից, նկարել Վերածնութեան դարը աելի կենդանի, աշխորժ գոլներով, պարզել նոր աշխարհայեցողութիւնների հիմքերը: Յօդուածագիրը սակայն, բաւականանում է ընդհանուր ֆրազ-ներով և նրա տուած պատկերը շատ դժգուն է, մակերևութային: Պատրականները և Խօկկաչիօնները: Ահա մի նմուշ նրա հասկացողութիւններից, ինչպէս յատուկ է չափաւորութեան ասպետներին, պ. Բերբերեանն ասում է որ խաւարամութիւն է ասել թէ պինչ որ հալին է—այն երկնքից էս, բայց մի և նոյն ժամանակ անհետատեսութիւն է ասելլ թէս ինչ որ եւրոպական է—լաւ էս: Սրինակներով ցայց է տալիս թէ հայը ինչ կարող էր վերցնել անզիփացիններից: Եւ ասում է, անզիփացինների հօասիրութիւնից օրինակներ վերցնել պէտք չէ, բայց նրանց առևտրական ընդունակութիւնները մեզ շատ բան կարող են սովորեցնելու Ուրիմի ամբողջ Անզիփացում հայը միայն վաճառականական իմաստութիւններ պիտի որոնէ... և անզիփական ազգը չունի աւելի լաւ բաներ, որոնց արժէր հետաել, աշակերտել նև երրմի մարդ Անզիփացից միայն վաճառականական արշինի պաշտամանք է փոխ առնելի համարում, կարող է նա Վերածնութեան դարի մասին գրել այնպէս, ինչպէս պէտք է: ինչպէս գրում են:—ի հարկէ, ոչ: Եւ սակայն այս յօդուածը միակ է ամբողջ ՅԹատրոնից մէջ իբրև փո-

քըր ի շատէ արժանաւոր գրական ինքնուրուն յօդուած: Մնացածները թարգմանական, հրապարակախօսական, քննադասական վարժութիւններ են մրայն, որոնք չը պիտի լոյս տեսնէին տարին երկու անգամ հրապարակուող մի հանդէսում, կամ պիտի լոյս տեսնէին օրինաւոր սըրբագրութեամբ: Խակ դրա համար հանդէսին հարկաւոր է մի հմուտ, զարդացած խմբագիր: Անա պ. Մոճուեանը գրում է թէ հայոց պատմութեան նախահայր Խերենացին է ըերում մը՝ տար ինձ զծուի ծխանիւ երզը, մինչ զեռ արար-աշխարհին լայտնի է, որ Գրիգոր Մագիստրուն է գրի աւել ալդ կոտրը: Առն պարոնը առենափոքր կասկած անգամ չէ զգում, որ մի քանի շարականների եղանակները յօրինել է Սահակ Պարթենը և դրանք համարեա անփոփոխ մնացել են մինչև մեր օրերը: Այսպիսի հեղինակաւոր, անսխալ՝ վճիռներ արձակելը այնպիսի հարցերի մասին, որոնք նոյն իսկ պատմական երկար ու բարակ քննութիւնների միջոցով էլ չեն կարող պարզաբանուել—առնուազն թեթևամութիւն է, ու այլ լայպիսի գործարներ շատ կան հանդէսի մէջ, որոնք ապացուցանում են թէ դա մի պարկ է, ուր ամեն մէկը զցում է, ինչ ուզում է և ինչ կարողանում է, բաական է նոյն իսկ Շատարոնական քրոնիկոն անունով յօդուածը, որպէս զի այդ հանդիւ մասին պատմութիւնը եղած ամեն մի վառ կարծիք հաստատէ: աւելի ողորմելի բան հագիւ թէ կարելի լինի երևակալել: Գոնէ կանոնաւոր հակերէնով գրէին, գոնէ մի փոքր ճաշակի, խելքի աւել լինէին: Գեղարուեստին նուիրած մի հանդէս չը պիտի արդքան թեթևազիկ լինի. վեց ամիս ժամանակ կատ մի գիրք հրապարակելու համար, ցանկալի կը լինէր արդքան երկար ժամանակամիջոցը գործադրել լաւ մշակուած

յօդուածներ պաարաստելու վրայ: Թէ չէ նախ ձեռքով գրած թէցն- զիաններն ու քրոնիկոնները այնքան տղեղ տպաւորութիւն են թոլում, որ մարդ ախտում է հրապարա- կութեան արտաքին վայելչութիւ- նը: Գրի մէջ գրուած են մաքուր ֆուուիպիաններ. դրանցից աւելի լաւ դրո՞ թիֆլիսում չէր էլ կարելի պահանջել բալց մենակ ֆուու- տիպիանները չեն կարող փրկել հանդէսը, հարկաւոր է բոլան- դակութիւն. իսկ բովանդակու- թիւնը պատկենների վայելչութեան հասցնելու համար հարկաւոր է ըն- դունակութիւն, գրական շնորհք: Եւ շատ ցաւալի է որ արդպիսի շը- նորհք չէ երեսում Շատարոնին մէջ:

„Կավազօք ՅԵՍՏԻԿԵ,“ վե- տրուար: Գ. Խերի Վեսելօվակին զե- տեղել է մի յօդուած, որ վերաբե- րում է հայոց հին գրականութեան և կրոմ է չչերտոսական շըանի գրական գործիչը վերնագիրը: Այդ գործիչը նղիշէն է, հինգերորդ դա- րի առաջին կրօնական պատերազ- մի ողմորուած երգիչը: Որ նղիշէն իսկապէս Շնարայրի սոխակնա է— այդ, ի հարկէ, ճիշտ է. մեր հին գրականութեան մէջ շատ քիչ կան արդպիսի ովկուրուած բանաստեղծ- ներ նղիշէն գեղեցիկ ոճի, նկարա- գրական սպանչելի ընդունակու- թեան կողմից մի բոլորովին ա- ռանձին տեղ է գրաւում հին մա- տենագրութեան պատմութեան մէջ: Նրա մասին խօսողը պիտի նախ և առաջ որոշէ իր դիրքը, թէ ի՞նչպէս է ուզում նայել նղիշէն: Երկու տե- սակ պահանջ կարելի է անել նղի- շէնի գրքից—կամ դուս պատմական կամ բանաստեղծուկան: Նթէ ու- զում ենք քննել նղիշէն գրքը իր- քե պատմագրութիւն, այն ժամա- նակ պիտի մանրամասն ուրումնա- սիրենք և հինգերորդ դարը ու դնենք նղիշէնի կողքին Կաղար Փար-

պեցուն, որ նոյնպէս նկարագրել է վարդանանց պատերազմը Արք Նըկարազրութեան մէջ էլ մենք զըսում ենք նղիշէի շատ պակասութիւնները, նրա տենդենցիան, նրա չափանցութիւնները: Գ. Վեսելօվսկին արդ չէ արել. նրա համար դուութիւն չունի Փարավեցին, նա պատմում է հինգերորդ դարի շարժումը այնպէս, ինչպէս պատմել է նղիշէն, և ոչ մի պակասութիւն չէ գոնում արդ պատմութեան մէջ, եթէ Մ հաշունք այն, որ նա չէ համատում այն ծառերին, որոնց նղիշէն դրել է Վարդանի, Վանդի և միաների բերանը նրբ գրականպատմական մի հետազոտութիւն, որի մէջ ամբողջապէս դուրս հանուած պիտի լինէր նղիշէի դէմքը, պ. Վեսելօվսկու գրուածքը չունի մեծ արժանաորութիւն հէնց այն իսկ պատճառով, որ նա չափանց միակողմանի է իր դասողութիւնների մէջ, նոր հորիզոններ չէ բաց անում ընթերցողի առաջ. մի խօսքով վերաբերում է նղիշէին և նրա ժամանակին այնպէս, ինչպէս վերաբերում էին հայերը այն բարի ժամանակները, երբ չը կար պատմական կրիստիկա, երբ ամեն ինչ հալած իղի տեղ էր ընդունուած: Այնքան թողլ են այլ Վեսելօվսկու պատմական տեղեկութիւնները մեր պնդեալի մասին որ նա հինգերորդ դարի մատենագիրներին թուելիս առաջ դնում է Ծովսէս Խորենացուն, ապա նղինիկ Անդրացուն, ապա միայն նորիւնին, մինչդեռ վերջինս է ըստ աւագութեան առաջին տեղը բռնում, իսկ Խորենացու մասին եղած վէճերը բայտնի են ամենքին, նա ասում է թէ Ղազար Փարավեցին նկարագրել է այն գրութիւնը, որի մէջ գոնում էր Հայաստանը հինգերորդ դարի Երկրորդ կէսում և վեցերորդի ակզրում. մինչդեռ Ղազարը երկար և մանրամասն խօսում է, սկսած չորրորդ դարից և հինգե-

րորդ դարի առաջին կէսի պատմութիւնն էլ աւանդում է մանրամասն կերպով: Բայց ինչպէս է նայում պ. Վեսելօվսկին նղիշէին, նրա համար նղիշէն թէ պատմագիր է, թէ բանաստեղծ, թէ հոգորական ջատագով: Բայց այդ դէպքում պէտք էր զանազաննել նղիշէի յատկութիւնները և ցոյց տալ թէ ո՛ր յատկութիւնն է որին զոհուած, ինչպէս է նա կարողացել իւրաքանչիւր իր յատկութիւնը երևան հանել: Արդ կողմից բաւական հետաքրքրական կը լինէր ուսումնասիրութիւնը ձարաբախտաբար, լոյուածագիրը հազիւ հազ շաշփում է այդ հարցերը, շտապելով պատմել նղիշէի գրքի բովանդակութիւնը նրբ այդպիսի մի պատմուածք էլ, որ գրուած է թիթեա աշխոյժ լնջուով, պ. Վեսելօվսկու գործը ունի իր արժանաւորութիւնը, դրանով ուսու ընթերցողը կը ծանօթանալ նղիշէի հետ չէնց այդ ընթերցողի տեսակէտից էլ մենք պիտի ասենք որ լոյուածը կարեոր է և լաւ—չետաքրքրական է չաշիմքէկ Վեզիրօվի հոմ լիշողութիւնները մէքթէպի մասին լոյուածը և մէքթէբա—զա այն նահապեսուական դպրոցն է, որ մահմեղական երեխանները, մօլլալի զեկավարութեամբ, սովորում են զրագիտութիւն: Արդ տեսակ դպրոցներ շատ և շատ կան մեր երկրի մահմեղականների մէջ. ամեն մէկը տեսած կը լին լիշոնցից, ուստի և Վեզիրօվի լիշողութիւնները թուում են նոյն իսկ շատ թողլ նկարագրութիւն: Գլխաւորը այստեղ այն է, որ թուրքերը սկսել են հասկանալ իրանց պակասութիւնները և այսպիսի լոդուած չէր կարող հրասարակուել մի քսան տարի առաջ, երբ թուրքի պակասութեան մասին խօսելը նշանակում էր թուրքի արիւնաբարթիւնմին լինել:—Չետաքրքրութեամբ է կարգացում և Վ. Կ. -ի.

„ՎՅԱՋՅԱ և ՀԵՎԿՈ“ մեծ յօդուածի շարունակոթիւնը, որ աւս անգամ խօսում է նոտալիալի մասին, գլխատրավէս նրա զեղարուժառական և երաժշտական հարսութիւնների մասին: Տուրիստի թեթև նկարագրութիւններ, որոնք ընթերցանութեան համելի նրիթ են տալիս: — Ուշադրութեան արժանին է հ. Դ.-ի յօդուածը ինդանների մասին: Խիզան անուանում են այն զիւղացիները, որոնք ընթերցանութեան համելի նրիթ են տալիս: — Ուշադրութեան արժանին է հ. Դ.-ի յօդուածը ինդանների մասին: Խիզան անուանում են այն զիւղացիները, որոնք սեփական հողիր չունեն և կալուածառէրերից վարձով հող են վերցնում ու փիսարէնը յալտնի պարտաւորութիւններ են յանձն առնում հողատիրոջ վերաբերմաբ: Այդ գրութիւնը գոյութիւն ունի դեռ XVIII դարից և պահուել է մինչև այժմ միայն Թիֆլիսի և Գութայիսի նահանգներում: Խիզանների հարցը կենսական մեծ նշանակութիւն ունի Վրաստանի համար, ուստի նրա բարեխիզդ ուսումնասիրութիւն է այդ յօդուածը: — Վրաց մամուլի տեսութիւնը յօդուածը նպատակ ունի ծանօթանելու վրաց ներկայ պարբերական մամուլի մէջ աշխատադների հետ. Կարդացում է հետաքըլք քրութեամբ: Ագրանից մենք իմանում ենք որ վրաց մամուլն էլ, ինչպէս նաև ուսահայերի մամուլը, ծնուել է իշխան Վորօնցօվի հոգատարութեան և լուսամիտ ջանքերի շնորհիւ: — Վերջու վիշտաւակն ք. Բ.-ի յօդուածը կովմասի տնտեսական զարգացման մասին: Յօդուածը դեռ չէ վերջացել, և մենք մի ուրիշ անգամ ամփոփ տեղիւթիւններ կը տանք նրա մասին:

—

„ԵՎԾԻԿԵ Եվրոպ“, յունուար: Պրօֆէսօր Կերիէ բաց է անում մի հետաքրքրական անկին պատմամական անցեալից: Դա հիւսիսակին

Աֆրիկալի այն ծովափն է, ուր հաստատուց չուոմի կուլտուրան, ուր քրիստոնէական եկեղեցին գտաւ իր առաջին հետևողները Ալատեղ էին ծնում այն քրիստոնէական վարդապետութիւնները, որոնք ուղղափառ անուանուած եկեղեցու համար հերձուածները էին: Կրօնի մլութիւն ստեղծելու համար քրիստոնեական աշխարհը մրցութիւնների և կոփանների ամբողջ դարաշվան, որի սկիզբը IV դարն էր: Ահա այդ սկիզբն է նկարագրութիւն վարդելի գիտնականը: Նրա գործի դեռ առաջի մասն է տպագրուած այս համարի մէջ՝ Յալտնի գրող և իրաւաբան Վ. Սպասօվիչ խօսում է անցեալ տարի վախճանուած ռուս յալտնի փիլիսոփայ Վլադիմիր Սոլօվիեվի մասին, վերցնելով նրան որպէս հրապարակախօս: Սոլօվիեվը ծշմարիտ ռուս հայրենասէլը էր, քալոզում էր կրօնական աղաստութիւն, դատապարտում էր աղգանական խորութիւնները և սաստիկ յարձակում էր ռուս նացիոնալիստների վրայ նրանց բըռնած ուղղութեան պատճառով: Սպասօվիչ դուրս է բերում հանգուցեալ մտածողի ազնիւ, համակրելի կերպարնքը և զարմանք է յալտնում որ Սոլօվիեվին իշխանց դաշնակից են համարում այնպիսի մարդիկ, որոնց հակառակորդն էր նաև — Ս. Խախինով գետեղել է Վլարաստանի միացման հարիւրամեալ տարեղաբերքը վերնագրով մի աշխատարութիւն: Այդտեղ նկարուած է Վլարաստանի անցեալ մինչև XIX դարի սկիզբը: Բայց թէ պատմաբանների որ տեսակին է պատկանում պ. Խախինովը, այդ կարելի է իմանալ հետևեալ փոքրիկ փաստից: Վրաց վերջին թագածառանդ Խալիթը սաստիկ գոլտերական էր, ալսինքն սիրում էր XVIII դարի աղաս զարգացմանները և մինչև անգամ թարգմանել է Մօնտեսքիէի յօդուածքը: Այդ կող-

մից բռլրովին բնական պիտի լինէր որ թագաժառանդը իր համար ամուսին գտնելու գործում նախապաշարմունքներից աղաս և անկախ հանդիսացաւ Բայց պ. Խախանօնին տում է թէ Դափիթը պիտան խայտառակեց ժողովրդի աշքում ամսանանալով մի հայունու հետո (այդ հայունին իշխանուհի Արամելիքն էր), կան մարդիկ, որոնց շովինիսո, նեղազգայնական հոգին չէ կարողանում տանել այնպիսի պատմանական փաստեր, որոնք ազատ մուծող, լայնասիրս մարդուն միան հաճութիւնն և ողենորութիւնն կարող է ազդել Անա թէ ինչ տեսակ պատմաբան է պ. Խախանօվը Աւելացնենք և այն որ մի և նոյն առարկաի մասին պարոնը գրել է բազմաթիւ ոռուերէն ամսագիրերի, լուսպիրների մէջ՝ „Ռусская Мысль“, „Եւстիկъ Всемирной Истории“, „Ռусскія Вѣдомости“ և այլն), աշխատելով այնպէս անել, որ մի տեղ գոածը միստեղերում գրուածներին չը նմանուի: Սա մի այնպիսի բրեղմատրութիւնն է, որ հազիւ թէ գիտնական լրջութեան նըշան համարուի: — Ինչպէս միշտ, ամսագրի իսկական զարդերն են կազմում ճներքին տեսութիւնն և «Հասարակական քրօնիկալից» բաժինները, որոնք բաշխակութեամբ են կարգացում: Այդուեղ ամսագիրը պատկերացրել է Ռուսաստանի պետական և հասարակական կեանքի դիմացը և բնորոշ հանգամանքները անցած XIX դարի ընթացքում:

—

„Ժурналъ для всѣхъ“, լունվարդի հրատարակութիւն է սա, որ մի անգամայն արժանի է իր անուան— «Ամսագիր ամենքի համար»: Ամենքի համար է սա նախ և առաջ իր գնով, դուք տալիս էք մի հատ ոռորի և ստանում էք մի տարուայ ընթացքում տասներկու գեկեցիկ դիրք: գեղեցիկ թէ արտաքինով,

թէ մանաւանդ բռվանգակութեամբ: Արտաքինը մաքոր է, կան շատ պատկերներ: տպում է մանր տառապվ, եթէ վերածենք ողվական խաշոր տառերի, կը ստանանք բառական հաստ զիրք: լունուարի համարը բաղկացած է 124 սինակներից: Եւ այսպէս հրատարակում է այդ ամսագիրը արդէն վեցերորդ տարին: Նա ունի երկու դրական գեղարութեատական հարաւատ բաժին, տալիս է զիտական ժողովրականացրած լոգուածներ, արտաքին տեսութիւն, ներքին տեսութիւն և ալին: Աղղութիւնը վերին աստիճանի համարկելի—առաջադիմական: Ամսագրին աշխատակցում են լայտնի պրոֆեսորներ, իսկ գեղարութեատական բաժնում գոնում ենք Մաքսիմ Գորկին, որ վերջեր այնքան մեծ անոն հանեց Ծովասատանում: Այս համարում տպուած է Գորկիի մի գեղեցիկ պատկերը: Նկարագրում է մի գինեսուն, ուր հաւաքուած հասարակ մարդիկ լսում են մի կնոջ, որ երգում է կոլրերի երգը Պատկերը վերին աստիճանի բնական է, աղդում է ընթերցողի վրայ, բաց անելով ժողովրական ցամերից մէկը: — Բանաստեղծ Բալմօնուը պատմում է անգլիական հաշակատր բանաստեղծ Շելլի մասին: — Ճերկու ընտանիքներ, պատմուանքի մէջ դուրս են բերուած երկու ընկերներ, մէկը ասարտել է համալսարանը, իրաւաբան է, ունի լաւ եկամուսներ, ամունացել է հարաւատ աղջկայ հետ, ապրում է փասաւոր կերպով, բայց շարունակ էլի մուծում է իր եկամուսների մասին, ունի մի դժգոհ կին և նրա կեանքը հարուստ ու գեղեցիկ բնակարանի մէջ ձանձրայի է, պաշտօնական—ցուրտ: Միա ընկերը դեռ ուսանող է, աղքատ, բայց ունի ընտանիք: Նա իր կնոջ և երիխանների հետ ապրում է մի կեխսոս հիւրանոցում, բայց և այլպէս, ուրախ ու անհոգ է, լի ու

լի վայելում է առողջ ու սիրող ընտանիքի երջանկութիւնը՝ Պրօֆէսօր Կլիչևակին զետեղել է «Թետրոս Մեծը» ու նրա աշխատակիցները անունով յօդուածը, որի մէջ խօսում է Ռուսաստանի մնձ վերանորոգովի մասին աշխոյժ և թեթև ոճովի՝ Պրօֆէսօր Կաբլովօվի «Ըշխատանքի բաժանումը», իրեւ միութեան հիմքայօդուածը կարդացում է յափշտակութեամբ Նկատել հրաշալի պարզ լեզուով ու օրինակներով ցուց է սոսած թէ ինչպէս մարդիկ իրանց աշխատանքով ծառայում են միմեանց բարօրութեան։ Աշխատանքը միացնում է ոչ միայն անհատները, այլ և ազգերը։ Եւ չընալած այս հազարամանքին, մարդիկ թշնամութիւն են անում իրար դէմ Աէտք էր որ աշխատանքը եղբարացնէր բոլոր մարդկանց։ բայց դուրս է գալիս որ «մննք միմեանց ուսում ենք ու դրանով էլ կշտացած ենք լինում»։ Ինչո՞ւ է ալսպէս Պրօֆէսօրը խօսուանում է պատասխանել այդ հարցին ուրիշ անդամի։ Տարօ փոքրիկ յօդուածի մէջ պատկերացրած է XIX դարը իր դրական ու բացասական կողմերով։ Մինչդեռ սովորութիւն է դարձել դատապարտել այդ զարը այն պատճառով, որ նա չը

կարողացաւ յեղաշրջել բարոյական հասկացուութիւնները, երկրի վրայ արդարութիւն և ազատութիւն հաստատել այստեղ բերուած են շատ օրինակներ, որոնք վկայում են որ դիտութեան առաջադիմութեան հետ բարոյական հասկացողութիւններն էլ առաջ են զընացել Ռատի ամսագիրը երախտագիտութեամբ է յիշատակում այդ դարը և ցանկութիւն է յալտնում, որ այդ դարի մեծ դործիչների իդէալները հասարակական բարոյականութեան մասին իրագործուէին ապագայում։ — Պրօֆէսօր Շիմկեվիչը սկսել է մի շարք հանրամատչելի պատմուածքներ, «Բիօլոգիայի շրջանից»։ — Արտաքին և ներքին անունները կազմուած են շատ գեղեցիկ ողով և կարգացում են մեծ հաճութեամբ։ Ահա թէ որքան գեղեցիկ նիւթ է տալիս ամսագիրը մի ուուրլով։ Կատարեալ ժողովրդական ամսագիրը Խմբագրութիւնը իր ծանօթութիւնների մէջ բացառում է այն բոլոր գիտական բառերը, որոնք պատահում են յօդուածների մէջ։ Պարզ և հասկանալի դառնալու համար ամսագիրը ոչինչ չէ խընալում։